ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Ա. Այս գրքի ճշմարտությունները ազդեցություն են թողել շատ սրբերի կյանքերի վրա՝
1. Սամուել Քոլրիջը այն անվանել է «մարդու ամենաաստվածային ստեղծագործությունը»
2. Ջոն Կալվինն այս գիրքը կոչել է Աստվածաշնչի իր ամենասիրելի գիրքը
3. Ջոն Նոքսը խնդրել է, որ իր համար մահվան մահճում կարդան Եփեսացիների թղթի հիման վրա Կալվինի քարոզները

Բ. Այս գիրքը կոչվել է Պողոսի աստվածաբանության «թագազարդ» կամ հիմնայուն: Պողոսի կեղմից արծարծվող ամենամեծ թեմաները սկիզբ են առնում Գաղատացիների թղթում, զարգանում՝ Հռոմեացիներում, և այժմ Եփեսացիներում արտահայտվում են հիասքանչ ամփոփիչ տեսքով:

Գ. Ինչպես որ Աստված օգտագործեց Հռոմեացիների թուղթը, որպեսզի հրահրվեր Բարեկարգումը, Նա նույնպես կօգտագործի Եփեսացիների թուղթը, որպեսզի վերամիավորի աղճատված եկեղեցիներն ու Քրիստոնեությունը: Հավատացյալների միաբանությունը և Քրիստոսի մեջ ունեցած ընդհանրությունը մեծ հաշվով ստվերում է նրանց տարբերությունները:

ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Պողոսը՝
1. Արտահայտիչ կերպով սահմանվում է Եփես. 1:1, 3:1-ում
2. Բանտարկության մասին վկայակոչումը (հավանաբար Հռոմում) Եփես. 3:1, 4:1, 6:20-ում
3. Գրեթե միաձայն եկեղեցական ավանդություն
   ա. Հռոմի Պապ Կղեմեսը մ. թ. 95թ-ին Կորնթոսին գրում է մի նամակ, որտեղ մեջբերում է Եփես. 4:4-6-ից
   բ. Իգնատիոսը Անտիոքացին (մ. թ. 30-107թթ) մեջբերում է կատարում Եփես. 1:9, 2:19, 3:4-9-ից
   գ. Պողիկարպոս Զմյուռնիացին (մ. թ. 65-155թթ)՝ Հովհաննես Առաքյալի աշակերտը, և Զմյուռնիայի երեցը, հաստատում է Պողոսին որպես հեղինակ
   դ. Հիրենեոսը (մ. թ. 130-200թթ) հաստատում է Պողոսին որպես հեղինակ
   ե. Կղեմես Ալեքսանդրացին (մ. թ. 150-210թթ) հաստատում է Պողոսին որպես հեղինակ
4. Այն առկա է հետևյալ ցանկերում՝
   ա. Մարկիոնի (որը Հռոմ եկավ մ. թ. 140թ-ին) ընդունված գրքերի ցանկում
   բ. Մուրատորիան Հատվածը՝ Պատառիկը (մ. թ. 180-200թթ) Հռոմից կանոնական գրքերի մի ցանկ է և նշում է Պողոսի այս թուղթը նրա գրքերի ցանկում
5. Թե՛ Կողոսացիների և թե՛ Եփեսացիների նամակների վերջաբանն ունի 29 բառ, որոնք գրեթե նույնն են հունարեն լեզվում (Կողոսացիներում կա երկու հավելյալ բառ):

Բ. Մեկ ուրիշ հեղինակ՝
1. Երասմոսը առաջինն էր, որ կասկածեց Պողոսի հեղինակ լինելու, հիմնվելով՝
   ա. Ոճի վրա – երկար նախադասությունները ընդհանրապես հատկանշական չեն Պողոսի մյուս նամակներին
   բ. Անձնական ոչ մի ողջույն չկա
   գ. Յուրահատուկ բառապաշարի առկայությունը
2. 18-րդ դարի քննադատ գիտնականների խումբը սկսեց հերքել Պողոսի հեղինակությունը

ա. Մի քանի համարներ կարծես թե երկրորդ սերնդի հավատացյալի կողմից են, Եփես. 2:20, 3:5
բ. Աստվածաբանական խոսքերը գործածվել էին տարբեր սահմանումներով (օրինակ՝ «խորհուրդը»)
գ. Շրջանառվող կամ փոխանցվող նամակի ժանրի յուրահատկությունը

Գ. Երասմոսի կողմից տրված կետերի պատասխանները
1. Ոճը տարբերվում է, քանի որ Պողոսը այժմ լինելով բանտում, ժամանակ ուներ մտածելու, երբ գրում էր Եփեսացիների նամակը
2. Անձնական ողջույնի բացակայությունը բացատրվում է այն փաստով, որ Եփեսացիներին ուղղված նամակը շրջանառվող էր և ուղարկվելու էր այդ տարածաշրջանում գտնվող շատ եկեղեցիների: Հռոմեական այս փոստային երթուղին, որն իր մեջ ներառում էր Եփեսոսը և Լիկուս Գետի Հարթավայրը, կարելի է տեսնել Հայտնություն 2-3 գլուխներում: Պողոսը գրեց մի երկվորյակ նամակ՝ Կողոսացիներին ուղղված թուղթը, երեք եկեղեցիներից բաղկացած հատուկ խմբի, որտեղ ներառված են մի քանի անձնական ողջունի հատվածներ:
3. Եփեսացիներում առկա մի շարք յուրահատուկ բառերի քանակը ճիշտ նույնն է, ինչ Հռոմեացիներին ուղղված թղթում առկա յուրահատուկ բառերինը (*hapax legomena*): Նպատակը, թեմայի պատճառը, նամակը ստացողները և իրադրությունը բացատրում է նոր բառերի կիրառության պատճառը:
4. Պողոսը խոսում է «առաքյալների և մարգարեների» մասին 1 Կորնթացիների 12:28-ում, որը նման է Եփես. 2:20 և 3:5-ին: Ոչ ոք չի հերքում, որ 1 Կորնթացիների թղթի հեղինակը Պողոսն է:

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԸ

Ա. Կողոսացիների և Եփեսացիների միջև պատմական կապը
1. Եպափրասը (Կող. 1:7, 4:12, Փիլիմոն 23) դարձի էր եկել Պողոսի Եփեսոս կատարած ավետարանչական ճամփորդության ընթացքում (Գործք 19)
ա. Նա իր նորահայտ հավատքը իր հետ տանում է իր տարածաշրջանը՝ Լիկուս Գետի Հարթավայրը
բ. Նա սկսում է երեք եկեղեցի՝ Երապոլիսում, Լավոդիկեում, Կողոսիայում
գ. Եպափրասը փնտրում է Պողոսին խորհրդի՝ օգնության համար, թե ինչպես վերահսկի հերետիկոսների կողմից ներթափանցած աշխարհայացքները: Պողոսը գտնվում էր Հռոմի բանտում (60-ականների սկզբին)
2. Սուտ վարդապետները եկան և սկսեցին միաձուլել՝ խառնել ավետարանը հունական գոյաբանության հետ
ա. հոգին ու մատերին իրար հետ համահավասար հավիտենական են
բ. հոգին (Աստված) բարի էր
գ. մատերիան (ստեղծագործությունը) չար էր
դ. գոյություն ունեին մի շարք *աեոններ* (հրեշտակային կարգեր) բարի բարձրյալ Աստծո և ավելի ցածրաստիճան աստծո միջև, որը ստեղծել էր մատերիան
ե. փրկությունը հիմնված էր ծածկագրերի գիտության վրա, որն օգնում էր մարդկանց *աէոնների* միջով անցնելուն

Բ. Պողոսի երկու թղթերի միջև գրական կապը
1. Պողոսը Եպափրասից լսել էր մի հերձվածողության մասին, որ գործում էր այս եկեղեցիներում, որտեղ նա երբեք անձամբ չէր եղել

2. Պողոսը գրեց մի խիստ նամակ՝ համառոտ, զգացմունքային նախադասություններով, որոնք ուղղված էին սուտ վարդապետներին: Կենտրոնական թեման Հիսուսի տիեզերական տիրակալությունն էր: Սա հայտնի է որպես Պողոսի Կողոսացիներին ուղղված նամակ:
3. Ըստ երևույթին, Կողոսացիներին նամակ գրելուց անմիջապես հետո, բանտում ժամանակ ունենալով, նա զարգացրեց այս նույն թեմաները: Եփեսացիների թղթին բնորոշ են երկար նախադասությունները և ձևավորված աստվածաբանական գաղափարները (Եփես. 1:3-14, 15-23, 2:1-10, 14-18, 19-22, 3:1-12, 14-19, 4:11-16, 6:13-20): Այն վերցնում է Կողոսացիների թուղթը որպես ելակետ՝ սկզբնաղբյուր և դուրս բերում այնտեղից աստվածաբանական կիրարկումները: Եփեսացիների կենտրոնական թեման Քրիստոսում ամեն ինչի միաբանությունն է, որը հակասում էր սկզբնական Գնոստիկ գաղափարներին:

Գ. Գրական և աստվածաբանական իրար հետ կապ ունեցող կառուցվածքները

1. Հիմնական կառուցվածքի նմանությունը՝
   ա. երկուսն էլ ունեն իրար շատ նման բացման խոսքեր
   բ. երկուսն էլ ունեն վարդապետական բաժիններ, որոնք հիմնականում կապված են Քրիստոսի անձի հետ
   գ. երկուսն էլ ունեն գործնական բաժիններ՝ հորդորներ Քրիստոնեական ապրելակերպ վարելու համար, կիրառելով միևնույն կատեգորիաները, տերմիններն ու արտահայտությունները:
   դ. երկուսն էլ ունեն ճիշտ նմանատիպ փակման խոսքեր՝ հունարենում 29 միևնույն հաջորդական բառեր, միայն երկու տարբեր բառեր կան ավելացված Կողոսացիներում:
2. Բառերի կամ կարճ արտահայտությունների նմանությունները՝

Եփես. 1:1գ և Կող. 1:2ա	«հավատարիմ»
Եփես. 1:4 և Կող. 1:22	«սուրբ և անարատ»
Եփես. 1:7 և Կող. 1:14	«փրկություն... թողություն»
Եփես. 1:10 և Կող. 1:20	«ամեն բան...երկնքում...երկրի վրա»
Եփես. 1:15 և Կող. 1:3-4	«լսեցի, ձեր սերը բոլոր սրբերի հանդեպ»
Եփես. 1:18 և Կող. 1:27	«փառքի ճոխությունը»
Եփես. 1:27 և Կող. 1:18	«գլուխը՝ եկեղեցին»
Եփես. 2:1 և Կող. 1:13	«մեռած էիք»
Եփես. 2:16 և Կող. 1:20	«հաշտվել...խաչ»
Եփես. 3:2 և Կող. 1:25	«տնտեսություն»
Եփես. 3:3 և Կող. 1:26,27	«խորհուրդ»
Եփես. 4:3 և Կող. 3:14	«կապը»
Եփես. 4:15 և Կող. 2:19	«գլուխ» և «աճել»
Եփես. 4:24 և Կող. 3:10,12,14	«հագնել»
Եփես. 4:31 և Կող. 3:8	«բարկություն, ցասում, չարություն, հայհոյություն»
Եփես. 5:3 և Կող. 3:5	«պոռնկություն, պղծություն, ագահություն»
Եփես. 5:5 և Կող. 3:5	«կռապաշտություն» (ցանկություն)
Եփես. 5:6 և Կող. 3:6	«Աստծո բարկությունը»
Եփես. 5:16 և Կող. 4:5	«ժամանակը ծախու առնելով՝ փրկագնելով»

3. Ճիշտ նույն արտահայտություններն ու նախադասությունները
   Եփես. 1:1ա և Կող. 1:1ա
   Եփես. 1:1բ և Կող. 1:2ա
   Եփես. 1:2ա և Կող. 1:2բ
   Եփես. 1:13 և Կող. 1:5

Եփես. 2:1 և Կող. 2:13
Եփես. 2:5բ և Կող. 2:13գ
Եփես. 4:1բ և Կող. 1:10ա
Եփ.6:21,22 և Կող. 4:7-9(29 հաջորդիվ բառեր, բացի Կողոսացիներում “kai syndoulos”-ից)

4. Նմանօրինակ արտահայտություններ և նախադասություններ
Եփես. 1:21 և Կող. 1:16
Եփես. 2:1 և Կող. 1:13
Եփես. 2:16 և Կող. 1:20
Եփես. 3:7ա և Կող. 1:23դ, 25ա
Եփես. 3:8 և Կող. 1:27
Եփես. 4:2 և Կող. 3:12
Եփես. 4:29 և Կող. 3:8, 4:6
Եփես. 5:15 և Կող. 4:5
Եփես. 5:19,20 և Կող. 3:16

5. Աստվածաբանորեն հոմանիշ հասկացություններ

Եփես. 1:3 և Կող.1:3	«գոհության աղոթք»
Եփես. 2:1,12 և Կող. 1:21	«Աստծուց օտարացած»
Եփես. 2:15 և Կող. 2:14	«Օրենքի թշնամությունը»
Եփես. 4:1 և Կող. 1:10	«արժանի քայլել»
Եփես. 4:15 և Կող. 2:19	«Քրիստոսի մարմինը Գլխից է աճում հասունության»
Եփես. 4:19 և Կող. 3:5	«սեռական պղծություն»
Եփես. 4:22,31 և Կող. 3:8	«դեն նետել» մեղքերը
Եփես. 4:32 և Կող. 3:12-13	«Քրիստոնյաները քաղցր միմյանց հանդեպ»
Եփես. 5:4 և Կող. 3:8	Քրիստոնեական խոսքը
Եփես. 5:18 և Կող. 3:16	Հոգով լցվելը = Քրիստոսի խոսքը
Եփես. 5:20 և Կող. 3:17	Աստծուց գոհանալ ամեն բանի համար
Եփես. 5:22 և Կող. 3:18	կանայք, ենթարկվե՛ք ձեր ամուսիններին
Եփես. 5:25 և Կող. 3:19	ամուսիններ, սիրեցե՛ք ձեր կանանց
Եփես. 6:1 և Կող. 3:20	որդիներ, հնազանդվե՛ք ձեր ծնողներին
Եփես. 6:4 և Կող. 3:21	հայրեր, մի՛ գրգռեք ձեր զավակներին
Եփես. 6:5 և Կող. 3:22	ծառանե՛ր, հնազանդվե՛ք ձեր տերերին
Եփես. 6:9 և Կող. 4:1	տերեր և ծառաներ
Եփես. 6:18 և Կող. 4:2-4	Պողոսի աղոթքի խնդրանքը

6. Կողոսացիներում և Եփեսացիներում կիրառվող տերմիններ և արտահայտություններ, որոնք բացակայում են Պողոսի մյուս գրքերում՝
ա.«լիություն» (որը Գնոստիկ տերմին էր հրեշտակների կարգերի համար)

Եփես.1:23	«Նրա լիությունը, Ով լցնում է ամենն ամենի մեջ»
Եփես.3:19	«լցվե՛ք Աստծո ամեն լիությամբ»
Եփես.4:13	«Քրիստոսի լիությանը»
Կող.1:19	«Նրա մեջ բնակվի Աստծո ամբողջ լիությունը»
Կող.2:9	«Նրա մեջ է բնակվում Աստծո ամբողջ լիությունը»

բ. Քրիստոսը որպես եկեղեցու «Գլուխ»
Եփես.4:15, 5:23 և Կող.1:18, 2:19

գ. «օտարացած»
Եփես. 2:12, 4:18 և Կող. 1:21
դ. «ժամանակը փրկագնելով»
Եփես. 5:16 և Կող. 4:5
ե. «արմատացած»
Եփես. 3:17 և Կող. 1:5
զ. «հանդուրժելով»
Եփես. 4:2 և Կող. 3:13
է. անսովոր արտահայտություններ և տերմիններ («միահյուսված», «ապահովել»)
Եփես. 4:16 և Կող. 2:19

Դ. Ամփոփում

1. Կողոսացիներում առկա բառերի ավելի քան մեկ երրորդ մասը առկա է նաև Եփեսացիներում: Գնահատվել է, որ Եփեսացիներում 155 համարներից 75-ը Կողոսացիներում ունի զուգահեռ՝ համազոր համարները: Երկուսն էլ գրվել են Պողոսի կողմից, երբ նա գտնվում էր բանտում:
2. Երկուսն էլ ուղարկվել են Պողոսի ընկեր Տյուքիկոսի միջոցով:
3. Երկուսն էլ ուղարկվել են միևնույն տարածաշրջան (Փոքր Ասիա)
4. Երկուսն էլ գործ ունեն միևնույն Քրիստոսաբանության թեմայի հետ
5. Երկուսն էլ շեշտադրում են Քրիստոսին որպես եկեղեցու Գլուխ
6. Երկուսն էլ հորդորում են պատշաճ Քրիստոնեական կյանք վարել

Ե. Տարատեսակության հիմնական կետերը

1. Կողոսացիներում եկեղեցին միշտ ներկայացվում է որպես տեղական, իսկ Եփեսացիներում՝ տիեզերական: Հնարավոր է պատճառը Եփեսացիներին ուղղված նամակի շրջանառվող բնույթն է:
2. Հերետիկոսությունը, որը գերակայող առանձնահատկություն է Կողոսացիներում, ուղղակիորեն չի նշվում Եփեսացիների թղթում: Սակայն, երկու նամակներում էլ գործածվում են Գնոստիկներին հատուկ տերմիններ («իմաստություն», «գիտություն», «լիություն», «խորհուրդ», «պետություններ և իշխանություններ» և «տնտեսություն»):
3. Երկրորդ Գալուստը անմիջապես է Կողոսացիներում, իսկ Եփեսացիներում՝ ուշացած: Եկեղեցին կանչված էր և է ծառայելու մեղավոր աշխարհում (Եփես. 2:7, 3:21, 4:13):
4. Պողոսին բնորոշ մի քանի տերմիններ այլ կերպ են գործածվում: Օրինակներից մեկը «խորհուրդ» տերմինն է: Կողոսացիներում խորհուրդը Քրիստոսն է (Կող. 1:26-27, 2:2, 4:3), իսկ Եփեսացիներում՝ (Եփես. 1:9, 5:32) Աստծո կողմից նախկինում ծածուկ պահած, իսկ այժմ՝ հայտնված ծրագիրն է հեթանոսների և հրեաների միության համար:
5. Եփեսացիների նամակում առկա են մի քանի ՀԿ-յան ակնարկներ (Եփես. 1:22 – Սաղմ. 8, Եփես. 2:17 – Ես. 57:19) (Եփես. 2:20 – Սաղմ. 118:22) (Եփես. 4:8 – Սաղմ. 68:18) (Եփես. 4:26 – Սաղմ. 4:4) (Եփես. 5:15 – Եսայի 26:19, 51:17, 52:1, 60:1) (Եփես. 5:31 – Ծնն. 2:24) (Եփես. 6:2-3 –Ելից 20:12) (Եփես. 6:14 – Եսայի 11:5, 59:17) (Եփես. 6:15 – Եսայի 52:7), սակայն Կողոսացիներում առկա են միայն մեկ կամ երկուսը՝ Կող. 2:3 – Եսայի 11:2, և հավանաբար Կող. 2:22 – Եսայի 29:13:

Զ. Չնայած որ շատ մնան են բառերով և արտահայտություններով, իսկ հաճախ նաև ուրվագծով, այս նամակները նաև ներառում են յուրահատուկ ճշմարտություններ՝

1. Ծնորհքի Երրորդության օրհնությունը՝ Եփես. 1:3-14
2. Ծնորհքի հատվածը՝ Եփես. 2:1-10
3. Հեթանոսների և հրեաների միաձուլումը որպես մեկ մարմին՝ Եփես. 2:11-3:13
4. Քրիստոսի Մարմնի միաբանությունն ու պարգևները՝ Եփես. 4:1-16

5. «Քրիստոսն ու եկեղեցին» օրինակ են «ամուսնու և կնոջ» համար՝ Եփես. 5:22-33
6. Հոգևոր պատերազմի հատվածը՝ Եփես. 6:10-18
7. Քրիստոսաբանության հատվածը՝ Կող. 1:13-18
8. Մարդկային կրոնական ծեսերն ու ծիսակարգերը՝ Կող. 2:16-23
9. Կողոսացիներում Քրիստոսի տիեզերական կարևորության ընդդեմ Եփեսացիներում Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանության թեմայի:

Է. Որպես ամփոփում, կարծում եմ, որ լավ կլինի հետևե՛ք Ա.Թ. Ռոբերթսոնի և Ֆ.Ֆ. Բրյուսի այն պնդմանը, որ Պողոսը երկու նամակներն էլ գրել է իրարից շատ մոտ ժամանակահատվածում՝ զարգացնելով Կողոսացիներում արտահայտած մտքերը ճշմարտությունը ներկայացնելու անկյունաքարի:

ՏԱՐԵԹԻՎԸ

Ա. Այս նամակի գրառման տարեթիվը կապված է Եփեսոսում, Փիլիպպեում, Կեսարիայում կամ Հռոմում Պողոսի բանտարկություններից մեկի հետ: Հռոմեական բանտարկությունը ամենաշատն է համընկնում Գործք Առաքելոցում ներկայացված փաստերի հետ:

Բ. Եթե համարենք, որ նա բանտարկված է եղել Հռոմում, հարց է առաջանում՝ ե՞րբ: Պողոսը բանտում է եղել 60-ականների սկզբում, որը արձանագրված է Գործք Առաքելոց գրքում, սակայն նա ազատվել է և գրել Հովվական նամակները (1 և 2 Տիմոթեոս և Տիտոս) և ապա նորից բանտարկվել է և սպանվել մ.թ. 68թ-ի հունիսի 9-ից առաջ, որը համարվում է Ներոնի ինքնասպանության օրը:

Գ. Լավագույն գիտական կանխատեսումն այն է, որ Պողոսը Եփեսացիներին ուղղված նամակը գրել է Հռոմում իր առաջին բանտարկության ժամանակ՝ 60-ականների սկզբին:

Դ. Տյուքիկոսը՝ Ոնեսիմոսի հետ միասին տարան Կողոսացիների, Եփեսացիների և Փիլիմոնի նամակները դեպի Փոքր Ասիա:

Ե. Պողոսի գրքերի հավանական ժամանակագրությունը ըստ Ֆ.Ֆ. Բրյուսի և Մյուրի Հարիսի՝ չնչին տարբերություններով:

	Գիրքը	Թիվը	Գրառման վայրը	Գործքի հետ կապը
1	Գաղատացիներ	48	Սիրիայի Անտիոք	Գործք 14:28, 15:2
2	1 Թեսաղոնիկեցիներ	50	Կորնթոս	Գործք 18:5
3	2 Թեսաղոնիկեցիներ	50	Կորնթոս	
4	1 Կորնթացիներ	55	Եփեսոս	Գործք 19:20
5	2 Կորնթացիներ	56	Մակեդոնիա	Գործք 20:2
6	Հռոմեացիներ	57	Կորնթոս	Գործք 20:3
7-10	Բանտի նամակները			
	Կողոսացիներ	60-ի սկիզբ	Հռոմ	
	Փիլիմոն	60-ի սկիզբ	Հռոմ	
	Եփեսացիներ	60-ի սկիզբ	Հռոմ	
	Փիլիպպեցիներ	62-63 վերջ	Հռոմ	Գործք 28:30-31
11-13	4-րդ Միս. Ճամփ.		Եփեսոս (?)	
	1 Տիմոթեոս	63(կամ ուշ,	Մակեդոնիա	
	Տիտոս	63, նախ-		
	2 Տիմոթեոս	քան 64 մ.թ.	Հռոմ	
		68)		

ՆԱՄԱԿԸ ՍՏԱՅՈՂՆԵՐԸ

Ա. Շատ ձեռագրեր (Chester Beatty Պապիրուսը, P^{46}, Սինայտիկուսը, Վատիկանուս B, Որոգինեսի Հունարեն Տեքստը) բաց են թողնում Եփես. 1:1-ում առկա «Եփեսոսում» բառը: RSV և Ուիլյամս թարգմանությունները բաց են թողնում ամբողջ արտահայտությունը:

Բ. Եփես. 1:1-ի հունարեն քերականությունը կարող է հարմար լինել տեղանվանը: Հավանաբար, որպես շրջանառվող նամակ, եկեղեցու տեղանունը բաց է թողնվել, որպեսզի համապատասխանաբար հարմարեցվի տվյալ եկեղեցիներում բարձրաձայն ընթերցելիս: Սա կարող է բացատրել Կող. 4:15-16-ում առկա արտահայտությունը՝ «Լավոդիկեյից նամակը», որը ըստ հավանականության Եփեսացիների նամակն է (Մարկիոնը Եփեսացիների թուղթը անվանում է «Լավոդիկեցիներին ուղղված նամակ»):

Գ. Եփեսացիների թուղթը գրվել է հիմնականում հեթանոսներին՝ Եփես. 2:1, 4:17, որոնց Պողոսն անձամբ չէր հանդիպել՝ Եփես. 1:15, 3:2: Լիկուս Գետի Հարթավայրում գտնվող եկեղեցիները (Լավոդիկեի, Երապոլիսի և Կողոսիայի) հիմնադրվել էին ոչ թե Պողոսի, այլ Եպափրասի կողմից (Կող. 1:7, 4:12, Փիլիմոն 23):

ՆՊԱՏԱԿԸ

Ա. Գրքի թեման գտնվում է Եփես. 1:10 և 4:1-10-ում, որը շեշտադրում է բոլոր բաների կապը՝ միաբանությունը Քրիստոսի մեջ: Քրիստոսն է վերականգնում Աստծո պատկերը մարդկության մեջ և աշխարհում (*kosmos*):

Բ. 1-3 գլուխներում վարդապետական բաժինը կարելի է ուրվագծել հետևյալ կերպ՝
Երրորդության Գթառատ Բնավորությունը և Մեղավոր Մարդկության համար Նրա հոգածությունը՝
1. Աստծո Երրորդության բնությունը (Եփես. 1:3-14)
2. Աստծո ողորմած բնավորությունը (Եփես. 2:1-10)
3. Փրկության Աստծո հավիտենական ծրագիրը

Գ. Եփեսացիների նամակը բանտից Պողոսի կողմից գրված չորս նամակներից մեկն է: Եփեսացիների և Կողոսացիների ուրվագծերը շատ նման են: Կողոսացիների թուղթը գրվել է պայքարելու Փոքր Ասիայի Լիկուս Գետի Հարթավայրում առկա նախնական Գնոստիցիզմի հերձվածողության դեմ: Եփեսացիների թուղթը գրվել է որպես շրջանառվող նամակ այդ նույն տարածաշրջանի համար՝ պատրաստելու մյուս եկեղեցիներին էլ սպասվող հերձվածողության դեմ: Կողոսացիներին ուղղված նամակը հակիրճ և խիստ է, մինչդեռ Եփեսացիներինը ընդլայնված տրամաբանությամբ ներկայացնում է ավելի երկար նախադասություններ կիրառելով միևնույն ճշմարտությունների համար՝ (Եփես. 1:3-14, 15-23, 2:1-9, 3:1-7, և այլն):

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Ա. Գիրքը ինքնըստինքյան բաժանվում է երկու մասի (ինչպես և Պողոսի բոլոր գրքերը)
1. Քրիստոսում միաբանությունը, 1-3 գլուխները (աստվածաբանություն)
2. Եկեղեցում միաբանությունը, 4-6 գլուխները (կիրառություն)

Բ. Առաջարկվող թեմատիկ ուրվագիծ՝
1. Պողոսին հատուկ ավանդական բացման խոսքը, Եփես. 1:1-2

2. Քրիստոսի մեջ բոլոր բաների միաբանության համար Հոր ծրագիրը, Եփես. 1:3-3:21
   ա. Պողոսի փառաբանությունը ուղղված Հորը, Եփես. 1:3-14
      (1) ժամանակներից առաջ Հոր սիրո համար
      (2) Ճիշտ ժամանակին Իր Որդու մեջ Հոր սիրո համար
      (3) Ժամանակի ընթացքում Սուրբ Հոգու միջոցով Հոր շարունակական սիրո համար
   բ. Եկեղեցիների համար Հորն ուղղված Պողոսի աղոթքը, Եփես. 1:15-23
      (1) որպեսզի Քրիստոսի մեջ Հոր հայտնությունը հասկացվի
      (2) որպեսզի հավատացյալների մեջ Հոր զորությունը հզոր կերպով գործիշ
      (3) Հոր կողմից բոլոր բաներից վեր Քրիստոսին մեծարելը
   գ. Ամբողջ մարդկության համար Հոր ծրագիրը ըստ Պողոսի, Եփես. 2:1-3:13
      (1) մեղավոր մարդկության կարիքը
      (2) Հոր ողորմած հոգածությունը
      (3) մարդկությունը կարիք ունի ուխտի համար պատասխանելու
      (4) Հոր ծրագիրը կատարելապես հայտնված
   դ. Հավատացյալների համար Հորն ուղղված Պողոսի աղոթքը, Եփես. 3:14-21
      (1) ներքին զորություն ստանալու համար (Հոգու միջոցով)
      (2) ավետարանը լիարժեք հասկանալու համար (ոչ թե միայն մասնակի ճշմարտություններ) փորձառությամբ և սիրով
      (3) Աստծո լիությամբ լցվելու համար (որը Քրիստոսն է)
      (4) այս բոլորը Աստծուց է, Ով կարող է
3. Հորը ցանկությունը Իր նոր ժողովրդի միաբանության համար, Եփես. 4:1-16
   ա. Երրորդության Աստծո միաբանությունը արտացոլվում է Իր որդիների միաբանության մեջ, Եփես. 4:1-16
      (1) միաբանությունը միանմանություն չէ, այլ սիրո ապրելակերպ
      (2) Աստված Ինքը Երեքը-մեկում միաբանություն է
      (3) հոգևոր պարգևները մարմնի բարիքի համար է, ոչ թե անհատների պատվի
      (4) միաբանությունը ծառայություն է պահանջում
      (5) միաբանությունը հրեշտակների հարձակման տակ է
      (6) միաբանությունը Քրիստոսի մեջ է
   բ. Քրիստոնեական միաբանությունը հակադրված հեթանոսական եսակենտրոնության հետ, Եփես. 4:17-5:14
      (1) դեն նետե՛ք հին կյանքի գործերը
      (2) հագե՛ք Քրիստոսին
   գ. Միաբանությանը հասնելու և պահպանելու միջոցները, Եփես. 5:15-6:9
      (1) միշտ լցվել Սուրբ Հոգով
      (2) Հոգով լեցուն կյանքը նկարագրված՝
         (ա) հինգ դերբայներով, Եփես. 5:19-21
         (բ) երեք ընտանեկան օրինակներով՝
            i. ամուսիններ – կանայք
            ii. ծնողներ – զավակներ
            iii. տերեր – ծառաներ
   դ. Քրիստոսակերպ միաբանության պաԱստծո յքարը, Եփես. 6:10-20
      (1) հոգևոր պատերազմը
      (2) Աստծո սպառազինությունը
      (3) աղոթքի զորությունը
4. Փակման խոսք, Եփես. 6:21-24:

ՍՈՒՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ (ԳՆՈՍՏԻՑԻԶՄԻ) ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ա. Առաջին և երկրորդ դարի Գնոստիկ հավատալիքները՝

1. Հոգու (Աստծո) և մատերիայի (ֆիզիկական առարկաների) միջև առկա գոյաբանական (հավիտենական) դուալիզմը՝ երկակիությունը
2. Հոգին բարի էր, մինչդեռ մատերիան՝ չար
3. Մի շարք հրեշտակային կարգերը (*աէոններ*) սուրբ բարձրյալ Աստծո և ավելի ցածր աստծո միջև, որը ստեղծել է չար մատերիան
4. Փրկության ուղին՝
   ա. ծածկագրերի գիտությունը, որոնք թույլ են տալիս, որ մարդը տեղափոխվի հրեշտակային ոլորտների միջով՝ երկրից դեպի երկինք
   բ. բոլոր մարդկանց մեջ աստվածային կայծը, չնայած որ ոչ բոլորն են հասկանալու կամ ընդունելու փրկարար գիտությունը
   գ. գիտությունը եկել է միայն էլիտ խմբի՝ հատուկ հայտնությամբ
5. Բարոյականությունը (երկու տեսակի Գնոստիկները)
   ա. ընդհանրապես հոգևոր կյանքի հետ կապ չունի (ազատականներ, հակատիպարներ)
   բ. կենսական կարևորության է (օրինապահություն)

Բ. Պատմական, աստվածաշնչյան Քրիստոնեության հակասությունները՝

1. Քրիստոսի աստվածությունն ու մարդեղությունը տարանջատելը (Գնոստիկներն ասում էին, որ Նա չէր կարող կատարյալ Աստված և կատարյալ մարդ լինել)
2. Նրա փոխանորդական մահը անտեսելը, որպես միակ փրկության միջոց
3. մարդկային գիտությունը փոխարինում էին աստվածային ձրի շնորհքի հետ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար, մեկ անգամ նստելով ընթերցե՛ք սուրբգրային տվյալ գիրքը: Սահմանե՛ք ամբողջ գրքի կենտրոնական թեման ձեր իսկ բառերով (ընթերցանության ցիկլ #1):

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրական ժանրը

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Հետևաբար մեկ անգամ նստելով երկրորդ անգամ կարդացե՛ք ամբողջ սուրբգրային տվյալ գիրքը: Ընդգծե՛ք հիմնական թեմաները (ընթերցանության ցիկլ #2) և արտահայտեք թեման մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. Եվ այլն